ռաք գնալ 'ի Կամենից, և այդ վաթսուն վերստը՝ անհնարին ցեխին պատճառաւ՝ երբեմն հարկ կը լինի օրերով համբայ մնալ, անձրևի ներքոյ։ Օդոյն անհարթութեանց դէմ ևս՝ ճանապարհի լաւ պատրաստարութիւն չունենալով, խոհեմութիւն համարեցայ ուրիշ յարմար միջոցի թողուլ ի Կամենից ճանապարհորդութիւնս, և ուղղեցի ընթացքս յՕտեսսա և անտի 'ի Թէոդոսիա։

Հարկ եղաւ սպասել այլ ևս եօթը տարի և ահա այս ամառ (1883) ամսօրեայ արձակուրդ և անցագիր, միանգամայն և յանձնարարական նամակ մի տանելով, առ տեղական վարչութիւնս 'ի Կամենից և 'ի Քիէվ, 'ի կողմանէ Արքունի հնագիտական ընկերութեան Օտեսսայի, օգոստոսի ամսոյն 14ին, երեկոյեան շոգենաւով ճամբայ ելայ 'ի Թէոդոսիոյ՝ յուխտագնացութիւն առ Տիրամայրն Հայոց 'ի Կամենից։

Օգոստոս 16 թէպէտ Ռուսաստանի համար աշունք է, այլ Ղրիմու համար դեռ ամառն. սակայն այն օրը՝ կարծես Ռուսաստանի աշունք կը շնչէր. խոնաւ էր օդն, մութ և անլուսին գիշեր, աստղերն՝ իբրև աղօտ լապտերներ շարուած էին երկնից կապոյտին վրայ, և 'ի խոնարհ դէպ 'ի հորիզոն՝ քաղաքիս տանց հրագներուն խառնուելով, շարունակութիւն կը գործէին երկնաւոր լոյսերը՝ երկրաւորաց, և երկոցունց անդրադարձութիւնը 'ի ծովուն՝ երրորդ շարք մի էր լուսերու. սակայն և այնպէս՝ այս երեք կարգ լոյսերն միանալով՝ չէին բաւական գիշերուան մթութիւնը ոչ միայն փարատելու, այլ և ոչ մեղմելու։ Մութ գիշերն՝ մութ մութ խորհուրդներ կը յարուցանէր մտացս մէջ։ Մերձաւորաց, բարեկամաց հրաժարականս տալով՝